

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՈՒ ԲԱՐՈՅԱԽՕՍԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ «ԲԱԶՄԱՎԵՊ»ՈՒՄ (1843-1900)

Միսիթարեան միաբանութեան անդամների համար օրէնքի ուժին ստացել այն պատուիրանները, որոնք նրանց էր աւանդել մեծ հայրենասէր, մարդասէր, գիտնական, մանկավարժ, հոգեւոր գործիչ Միսիթար Սեբաստացին: Այդ իսկ պատճառով կէս դարից աւելի արդէն հրատարակուող՝ «Բազմավեպ»ը առանձին բաժիններ ունի նուիրուած կրթութեանը, դաստիարակութեանն բարոյականութեանը: Այդ կատեզորիաների սեւեռնամիտ գաղափարը մարդուն միշտ աստուածային տաս պատուիրանների մէջ տեսնելին էր: Սա ոչ միայն «Բազմավեպ»ի որդեգրած ուղղուածութիւնն էր, այլեւ մարդկութեան քաղաքակրթութեան ժամանակներից եկող գերիմնդիր:

Դիմելով մարդուն ընդհանրապէս՝ հանճարեղ Սակաթ-Նորան խրատում է.

Են բանն արա, վուր Ասքան շարքումն է,
Խըրատնիրըն գըրած Հարանց վարքումն է.
Յիրիի բան կայ՝ հոգու, մարմնու կարգումն է՝
Գի՛ր սիրէ, դալա՛մ սիրէ, դաւթա՛ր սիրէ¹:

Ահա հէնց այդ՝ հոգու եւ մարմնի փոխյարաբերութեան խընդիրների մասին «Բազմավեպ»ը ուսուցողական խորախորհուրդ աշխատանք է ծաւալում:

Հանդէսը դաստիարակութիւնը եւ բարոյախօսութիւնը դիտարկում է պատմական լայն շառաւղով՝ սկսելով վաղնջական, անտիկ ժամանակներից եւ հասցնելով նոր ժամանակներ:

1 ՍԱՅԱՅ-ՆՈՎԱ, Հայերէն խաղեր, Վարդգէս Հրաչի Զարգարեանի աշխատափառք, Երևան 2013, 12:

Վաղնջական ժամանակներից են գալիս առած-ասացուածք-ները, որոնք մարդկութեան գարաւոր կենսափորձի իմաստուն ձեւակերպումն են, երբեք չեն հնանում ու մարդուն ուղեկցում են յաւերժօրէն: Այդ իսկ պատճառով «Բազմավիշ»ի տարբեր համարները զարդարուած են այդ իմաստուն խօսքերով: Դրանց հանդիպում ենք հչնց առաջին համարներում, նաև շատ տասնամեակներ անց: Հստ որում դրանք երբեմն կոչւում են «Առածք», իսկ երբեմն «Բարոյական իմաստք»:

Ա.Ռ.Ա.Ծ.Ք

Հին սուսեր, հին բարեկամ, հին գինի,
Մի' վախեր, բեզ չեն լինիր թշնամի:

Մանուկըն ծնանի՝ մեռնելու համար,
Խսկ տունըն կանգնի՝ ընկնելու համար:

Երեք փորձաքարք են կենաց մարդուն՝
Հարըստութիւն, փառք, եւ ձախողութիւն:

Որ շատ կը փութայ՝
Փութով կը զղայ:

Եթէ իշխանն ունի սուսեր եւ ասպար,
Խսկ իմաստունն ունի լեզու եւ հանճար²:

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԻՄԱՍՏՔ

Յոյսն ընդհանուր մարդկութեան միակ բարին է. նոքա որ ո-
չինչ ունին՝ անով ունին տակաւին բան մը:
Խոսից առատութիւնն ոչ է նշանակ մեծագանձ իմաստութեան:
Մարմնոյ երջանկութիւնն կը կայանայ առողջութեան, խսկ հոգ-
ւոյն՝ ի գիտութեան:

Մարմնոյ արտաքնայարդար պահունանք չեն կազմեր զիշմա-
րիտն գեղեցկութիւն, այլ հոգւոյն իմաստութեամբք նիխանալն: Կարգաւորեալ Պետութիւն այն է՝ որում ոչ չափազանց հա-
րուստ եւ ոչ բոլորովին աղքատ քաղացիք կան:

Անիրաւ միջոցներով ստացուած մի' դիզեր:

Սեփական թերութիւններն ուղղելու ապահով կերպն է զգու-
շանալ այն բանէն, որուն համար զայլս կը յանդիմանեմք:

2 «Բազմավիշ», Խէ (1889), էջ 47:

Խմաստասիրի մը հարցուցին, թէ աշխարհիս մէջ ամենադժուարին, ամենադիրին եւ ամենափայցը իրերն ո՞յք են. Առաջին, ըստ, ինքինքն հանչել, երկրորդ՝ խրատել զայլս, եւ երրորդ՝ իւր փափաքելին ընդունել:

Հարկ է լրութեամբ կմել խօսքերը, զլուութիւնը՝ ժամանակաւ: Մի՛ տար բարեկամացդ աւելի հաճոյագոյն խորհուրդները, այլ աւելի օգտակարները:

Մեծամեծ ձևոնարկներու մէջ անհնար է ամենուն ալ հաճոյ լինել:

Թողումք այլոց հարստութիւնը, եւ մեք շատանանք առաքինութեամբ³:

«Բազմավէպի» շուրջ կէսդարեայ մանկավարժական ու բարոյախօսական դասերը կարելի է հետեւեալ թեմատիկ բաժանման ենթարկել՝

- ա) Հնադարեան ժամանակների մանկավարժական ու բարոյախօսական դասերը
- բ) Զինական եւ արեւելեան դաստիարակութեան պատուիրանները
- գ) Ժմաների դպրոցական կրթութիւնը եւ դրա առաջադիմական միտումները
- դ) Աշակերտի նկատմամբ անհատական մօտեցման անհրաժեշտութիւնը
- է) Բնութիւնը եւ աշակերտը, ծնողը եւ ուսուցիչը՝ նրանց կապը եւ համագործակցութիւնը
- զ) Կրթութեան եւ դաստիարակութեան միասնական լինելը
- է) Օրինակի եւ ոչ քարոզի միջոցով դաստիարակելու անհրաժեշտութիւնը
- լ) Զննական առարկաների եւ ուսուցողական նիւթերի դերը կրթութեան գործընթացում
- թ) Աշխարհի որ քաղաքում, ի՞նչ նշանաւոր մարդիկ են ծընուել ու ե՞րբ
- ժ) Սահմանափակ գիտելիքների տէր մարդը չի կարող ուսուցիչ լինել
- ժա) Ուսուցիչը պէտք է ծանօթ լինի մանկավարժական մեթոդներին եւ ունենայ սեփական մեթոդը
- ժբ) Կնոջ դաստիարակութեան ու կրթութեան խնդիրները

³ Անլ, 270:

Այս եւ այլ մանկավարժական ու բարոյախօսական խնդիրներին, որոնք արծարծում են «Բազմավիճակ»ի շուրջ կէսդարեայ համարներում, հարկ է նուիրել ստուարածաւալ հետազոտութիւն։ Մեր նպատակն է առանձնացնել խնդիրների ուրուագծերը միայն։

Ինձ համար, որպէս գիտութեամբ զբաղուով կնոջ, շատ հետաքրքիր է, թէ Վենետիկի Միլիթարեան միաբանութեան գլխաւոր հանդէսն այդ առումով ինչ հարցադրումներ ունի եւ ինչ նիւթեր է տպագրել։

Ի պատիւ «Բազմավիճակ»ի խմբագիրների, հանդէսը կանանց հասարակական դիրքի, կրթութեան ու դաստիարակութեան հարցերում հանդէս է բերել առաջադիմական մօտեցումներ։

«Բազմավիճակ»ի 1896 թուականի տարբեր համարներում առկայ է «Սկզբունք դաստիարակութեան» վերտառութեամբ բաժինը, որում հաւաքուած են տարբեր ժամանակների եւ տարբեր ազգերի մտածողների ասոյթները դաստիարակութեան մասին։ Դրանցում ուշագրաւ բանաձեւումներ կան նաեւ կանանց դաստիարակութեան մասին։ Մոնտեսքեօն, օրինակ, յիշեցնում է, թէ որքան արխասիրու էին Սպարտայի կանայք, որոնք իրենց անվախ վարքագծով աւելի էին գտապնդում իրենց ամուսիններին։ Ուրեմն կանանց անհրաժեշտ է դաստիարակել քաջալերութեան եւ վսեմախոհութեան ոգով։ «Օրինրաներին կրթեցէք համեստութեան եւ աշխատափրութեան եւ այնպէս վարժեցրէք, որ իրենց փառասիրութիւնը գտնեն ընտանիքի լաւագոյն մայրեր լինելու մէջ։ Եթէ նրանք տանը ծոյլ ու անցործ են, ապա նրանց ընտանեկան կեանքը անտանելի կը լինի»⁵։

Ֆենելոնն էլ մերժում է այն մտածողներին, որոնք դէմ են աղջիկներին ուսում տալուն։ Նա յիշեցնում է, որ հէնց կանայք են կործանում կամ կանգնեցնում ընտանիքը, եւ ապացուցուած է, որ կանանց յոռի դաստիարակութիւնն աւելի վնաս է պատճառում, քան տղամարդկանցը⁶։

4 Այս խնդիրներին անդրադարձ կայ Ռուզան Դոլոխանեանի երկու մենագրութիւններում՝

ա) Մանկավարժական եւ բարոյախօսական դասերը «Բազմավիճակում» (1843-1863), «Լուսակն», Երևան 2015, էջ 82։

բ) Մանկավարժական, բարոյախօսական եւ հայրենասիրական դասերը «Բազմավիճակում» (1866-1885), Գիրք երկրորդ, «Լուսակն», Երևան 2017, էջ 86։

5 «Բազմավիճակ», ԾՊ. (1896), էջ 129։

6 Անդ։

Խիստ շահեկան է «Բազմավեպ»ի դիրքորոշումը աշակերտներին ազգային դաստիարակութիւն տալու խնդրում:

1887 թուականի «Բազմավեպ»ում տպագրում է մի յօդուած «Սէլիութեանք եւ օսմանեանք» խորագրով, որը թարգմանութիւն է անգլերէնից: Յօդուածը ներկայացնում է, որ թուրքերի բնօրրանը գտնուում է Զինաստանի հիւսիսային սահմանագլխին եւ Ալթայի լեռներում, ու Ե.-Է. դարերում Եւրոպայի ժողովուրդները նրանց մասին ոչինչ չդիտէին: Թուրքական ցեղերը Մոնղոլիայի անբեր լեռնաղացտերից սկսեցին շարժուել դէպի արեւմուտք՝ տիրելու եւ յափշտակելու դիտաւորութիւն ունենալով: Մահմեդականութիւն ընդունելուց յետոյ նրանք աւելի հզօրացան եւ դիւրութեամբ ամբողջովին գրաւեցին Պարսկաստանը, Հայաստանը, Ասորեստանը, Փոքր Ասիայի մեծ մասը: Նրանց տիրապետութեան սահմանները արեւելքում հասնում էին Զինաստանին, իսկ արեւմուտքում՝ Միջերկրական ծովին⁷:

Կարծես զգալով հայերին սպասուող աղէտները՝ 1895-1896 համիդեան ջարդերը, 1915ին Արեւմտահայաստանի հայերի բնաջնջումը, արցախահայութեան ազգային-ազատագրական մարտերը մեր օրերում, Միխիթարեան հայրերից Հ. Բարսեղ Սարգիսեանը «Բազմավեպ»ի 1881 եւ 1882 թուականների տարբեր համարներում տպագրում է իր «Հայ ազգն եւ իւր առ մարդկութիւնն ըրած օգուտները» ուսումնասիրութիւննը, որ նորօրեայ հայ ժողովրդի պատմութեան դասագրքի դեր է կատարում: Հայաստանի վաղնջական պատմութիւնը գիտնականը շարագրում է ըստ Մովսէս Խորենացու, Զերողոստոսի, Քսենոփոնի, Դիոսորոս Սիկիլացու, Հին Կտակարանի եւ այլ կարեւոր աղբեկրների: Շատ նպատակային է հետազոտութեան բնաբանը, որ քաղուած է Հին կտակարանի «Ճողովութիւն»⁸:

Ազգ գայ եւ ազգ երթայ եւ աշխարհս
(Հայաստան) յալիտեան կայ:⁹

Հ. Բ. Սարգիսեանի այս հետազոտութիւնն աւելի քան արդիական է, որովհետեւ թուրքիայի ու Աղբեկջանի պատմաբանները Մեծ Հայքի տարածքները վերագրում են իրենց: Այն դէպ-

7 «Բազմավեպ», ԽԵ. (1887), Էջ 367:

8 «Սերունդ է գնում, սերունդ է գալիս, բայց երկիրը մնում է յաւերժ», «Ճողովող», Ա, 4:

9 «Բազմավեպ», ԼԹ. (1881), Էջ 3:

քում, երբ ԺԹ. դարում անգլերէնից թարգմանուած օտար գիտնականի յօդուածը ներկայացնուամ է, թէ թուրք-սէլջուկները Մեծ Հայքի տարածքում յայտնուել են ընդամէնը ԺԱ. դարի սկզբում:

Հ.Բ. Սարգիսեանը յենուելով «Քանոնի Անարասիսի» վը-րայ, ուր նկարագրուած է 10.000 հոգուց բաղկացած յունական գորքի Հայաստանով նահանջելու փաստը, յիշեցնուամ է, թէ նրանք ինչ լիութիւն, բարեկեցութիւն ու հիւրընկալութիւն են տեսել Ք.ա. 401 թուականի Հայաստանում. «Գնում էր գիւղերում և դողմերի մօտ եւ ամենուրեք նրանց գտնում էր կերուխումի եւ ուրախութեան մէջ, եւ ոչ մի տեղ նրան բաց չքողեցին, մինչեւ նաշ չմատուցեցին: Զկար մի տեղ, որ սեղանին միաժամանակ չդնեին գառան, ուի, խոզի, հորքի եւ հաւի միս, մեծ քանակութեամբ ցորենի ու գարու հացի հետ»¹⁰:

Խօսելով հին Հայաստանի քաղաքակրթութեան մասին՝ հեղինակը չի մոռանում Բիւզանդիայի պետութեան հօգորացման խնդրում հայազգի կայսրերի ու կայսրուհիների կատարած դերը: Այս փաստերը եւս ըստ օտար աղբիւրների:

«Բազմավէպ»ը ներկայացնուամ է, թէ հայ ժողովրդի առաջընթացի, հայ պետականութեան վերականգման համար որքան կարեւոր է դպրոցի դերը: Որպէս օրինակ բերւում են գերմանական դպրոցները, որոնք տեղաւորուած են բարեկարգ շէնքերում եւ այդպիսիք են անգամ հեռաւոր գիւղերում:

Ի՞նչ մեթոդներով դասաւանդելու խնդիրը եւս շարունակ քննւում է «Բազմավէպ»ի համարներում:

Հայ դպրոցի ուսուցչի գերինդիրը պէտք է լինի աշակերտին ազգային ողով դաստիարակելը, որ բնաւ չի հակասում համընդհանուր մարդասիրութեանը: «Բազմավէպ»ը ուղղակի պահանջում է. «Ազգին յատուկ կրթութիւն տուողն պէտք է ազգային ըլլայ»¹¹:

Այս խնդրում «Բազմավէպ»ը ձայնակցում է Խաչատուր Աբովյանի հրամայական պահանջին: իմանալ շատ լեզուներ, սակայն երբեք չմոռանալ, այլ ամուր պահել ազգային լեզուն ու հաւատը:

1890 թուականի Յունուար եւ Փետրուար ամսուայ համար ներում դարձեալ Հ. Բարսեղ Սարգիսեանն անդրադառնում է հայ

10 ՔՍԵՆՈՓՈՆ, Անարասիս, Թարգմանութիւնը Սիմոն Կրկեաշարեանի, Երևան 1970, էջ 98:

11 «Բազմավէպ», 1849, թիւ 3, էջ 33:

ժողովրդի պատմութիւնը՝ կրթութեան կարեւոր բաղադրիչ դարձնելու ինդրին։ Նրա ծաւալուն յօդուածները խորագրուած են. «Անցեալ պատմութեան կրթիչ ազդեցութիւնն եւ նորա ուսումնասիրութեան անհրաժեշտ միջոցներն»¹²: Յօդուածագիրը պահանջում է. «Անցեալը պէտք է ուսումնասիրել. պատմական կեանիքի ուսումնասիրութիւնը կրթիչ ազդեցութիւն ունի»¹³: Յօդուածագիրը յիշեցնում է անդլիացի մեծ բանաստեղծ Լորս Պայրոնի հիացական կարծիքը հայերի պատմական անցեալի վերաբերեալ:

«Բազմավեպ»ի տարբեր համարներում հանդամանալի յօդուածներ կան երեխայի կրօնական դաստիարակութեան վերաբերեալ. Քրիստոնէական կրօնը դիտում է որպէս դաստիարակութեան առանցք, եւ եթէ որեւէ ազդ հեռանում է Աւետարանի վարդապետութիւնից, ապա ազգային առաջընթացի փոխարէն գնում է դէպի անկում»¹⁴:

Հետաքրքիր է, որ բացատրում է, թէ խոր անցեալում կրօնը, քաղաքականութիւնը իմաստ շաղկապուած էին. Ազգերի առաջին դաստիարակները դարձան օրէնսդիր քրմապետները. Որփէո-սը՝ յոյների, էրմետիոսը՝ եգիպտացիների, Զրուանը՝ պարսիկների, Նուման՝ հռոմէացիների դաստիարակներն էին¹⁵:

Հանդէսը շատ է կարեւորում մօր գերը աղջկայ դաստիարակութեան եւ հօրը՝ տղայի դաստիարակութեան գործում. «Մայրն ահա առաջին եւ կարեւորագոյն դաստիարակն»¹⁶:

«Բազմավեպ»ը մարդկային հասարակութեան առաջընթացը տեսնում է ճիշտ դաստիարակութեան մէջ, որովհետեւ «Առանց լաւ դաստիարակութեան գիտնականն ուրիշ քան չէ, քան մի իմաստակ, փիլիսոփան մի շինական, գիտուորը մի անբան»¹⁷:

ԱԵԼԻՑԱ. ԴՈԼՈՒԽԱՆԵԱՆ

12 «Բազմավեպ», ԱԹ. (1890), էջ 3:

13 Անդ, էջ 5:

14 «Բազմավեպ», Դ. (1896), էջ 369:

15 «Բազմավեպ», ԾԵ. (1897), էջ 489:

16 ԾԳ. (1895), էջ 216:

17 «Բազմավեպ», ԾԵ. (1897), էջ 68:

Summary

PEDAGOGICAL AND MORAL ISSUES IN “BAZMAVEP” (1843-1900)

AELITA DOLUKHANYAN

The first issue of “Bazmavep” was released in Venice in 1843. For the members of the Congregation of Mkhitarists, the precepts left by the great patriot, humanist, scholar, teacher and spiritual figure Mkhitar Sebastatsi had the force of law. It is for this reason that “Bazmavep”, being published for more than half a century, had separate sections on education, upbringing and morality. The constant idea of these categories has always been to see the human being within the ten commandments of the Lord. This is not only the orientation chosen by “Bazmavep”, but also the most important task coming from the depths of human civilization.

It is interesting to note that in one of the articles the fact is explained that in the past religion and civilization were closely related.

“Bazmavep” sees the progress of human society in proper upbringing, because “Without a good education, a scientist is nothing but a sophist, a philosopher is nothing but a laborer, and a soldier is nothing but an idler.”